ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԴՊՐՈՑ
ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հետազոտական աշխատանք

| | |
|---|---|
| **Կազմակերպության տվյալներ**<br>• Անվանում, հասցե<br>• Տնօրեն<br>• Էլ.հասցե<br>• Հեռախոս | «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ<br>Վահրամ Սողոմոնյան<br>masnakcayindproc@gmail.com<br>+37493581908 |
| | |
| **Հետազոտության թեմա/վերնագիր**<br>• Հետազոտության թեմա | Բառապաշարի ուսուցման կարևորությունը և առանձնահատկությունները օտար լեզվի ուսուցման պրոցեսում: |
| | |
| **Ուսուցչի տվյալներ**<br>• Ա.Ա.Հ.<br>• Մասնագիտություն<br>• Հեռախոս<br>• Էլ. հասցե<br>• Դասավանդվող առարկաներ<br>• Դասարաններ | Պլուզյան Ռաֆիկ Աշոտի<br>Անգլերենի ուսուցիչ<br>093038661<br>pluzyanrafik1954@mail.ru<br>Անգլերեն<br>12 հ*1* , 12 բ*1*, 12 բ2 , 11 բ*1* , 11 հ2 դասարաններ |

| **Ուսումնական հաստատության տվյալներ** | |
| --- | --- |
| • Անվանումը, հասցե | Վանաձորի Վ. Տերյանի անվան թիվ 5 ա/դ |
| • Հեռախոս | Տիգրան Մեծի փակուղի 2 |
| • Էլ. հասցե (տնօրինության) | Հեռ. 4-34-30 |
| • Web կայքի հասցե | vanadzor5@schools.amcom<br>vanadzor5.schoolsite.am |

Բովանդակություն


- Ներածություն -----------------------------------2
- Բառապաշարի ուսուցման և ճիշտ արտասանության կարևորությունը օտար լեզվի ուսուցման գործընթացում---------3
- Եզրակացություն-----------------------------------9
- Գրականություն.-----------------------------------11

# Ներածություն

| | |
|---|---|
| Նպատակը եւ հետազոտական հարցը | Նպատակ –Բառապաշարի հարստացմամբ, բառերի հստակ արտասանությամբ օտար լեզվի ուսուցման արդյունավետության բարձրացում: Հետազոտական հարց – 10 բառը մեկ օրում մեթոդի օգնությամբ հնարավո՞ր է արդյոք բարձրացնել օտար լեզվի յուրացման արդյունավետությունը: |
| | |
| Թեմայի կարևորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար | Տվյալ թեմայի դեպքում որպես թիրախային խումբ հանդես են գալիս բոլոր դասարանների աշակերտները ,քանի որ ուսուցման պրոցեսում բոլոր աշակերտները անընդհատ նոր բառեր են սովորում գիտության, կրթության,կենցաղի, բնության,արվեստի, սպորտի և այլ բնագավառներից: Հարկավոր է անընդհատ լայնացնել բառերի ուսուցման,տիրապետման շրջանակը,քանի որ դժվար է նախօրոք որոշել,թե որ բնագավառում են նրանք աշխատելու,որ երկրում ,և այլն: |
| | |
| Ո՞ր առանցքային կոմպետենցիան է ուղղված նպատակի ուսումնասիրությունը | Հետազոտական աշխատանքի ուսումնասիրությունը միտված է սովորել սովորելու և լեզվական կոմպետենցիայի զարգացմանը: |
| | |
| Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին | «Բազմակարծիք կրթական համակարգի ձևավորում: Առանցքային կոմպետենցիաներ» թեմայի շրջանակում: |

| | |
|---|---|
| Օգտագործված մեթոդները | • Գիտակրթական որոնման մեթոդ<br>• Գործնական մեթոդ |
| | |
| Իրականացման ժամանակահատվածը | 5.09<br>20.09 |
| Թիրախ խումբը և շրջանակը<br>/քանակ, սեռային բաշխում/ | Թիրախ խումբ՝ 11բ1,հումանիտար դասարան<br>Աշակերտների քանակ – 19<br>Աղջիկ – 7<br>Տղա- 12 |

Ակնարկ

Ցանկացած լեզու սովորելու համար հարկավոր է ունենալ որոշակի իմացություն,առանց որի հնարավոր չէ որևէ միտք հասկանալ, գրել կամ կարդալ որևէ լեզվով:Բառապաշարի ընտրությունը կատարվում է նպատակային ձևով,այսինքն իմանալ է պետք ,թե կյանքի ,աշխատանքի որ բնագավառում պետք է խոսողը կիրառի տվյալ բառապաշարը:Իսկ դրանք կարող են լինել չափազանց լայն, անսահմանափակ: Ուստի պետք է ընտրել տվյալ ասպարեզում գործածվող ամենաառաջնային բառերը, բառակապակցությունները: Գերադասելի է նաև ճիշտ արտասանության ուսուցումը,որպեսզի ուսուցանվող լեզուն լինի պարզ, հստակ ու հասկանալի:Հնարավորության դեպքում ցանկալի է,որ բառերի ուսուցումը զուգորդվի նաև քերականական որոշակի իմացությամբ:Նախկինում բառեր սովորեցնում էին առաջին հերթին զինվորական ասպարեզում գրավյալ տարածքներում փոխըմբռնում ապահովելու համար: Ընդ որում,հարկավոր էր նաև հաշվի առնել «սովորողների» հնարավորությունը,կրթական մակարդակը:Հնարավոր չէր միանգամից սովորեցնել 20-30բառ:Դրա համար սահմանափակվում էին 7-8, առավելագույնը մինչև 10 բառը մեկ օրում: Այդ մեթոդը գործում է մինչև այժմ, առավելագույնը 7-8 բառ: Ընդ որում ընդունված է ,որ բառերի

թարգմանությունները անմիջապես չպիտի ասվի,դրանք տրվում են որոշակի իրադրությունների նկարագրմամբ,որոշ առարկաների ցուցադրմամբ,համադրմամբ, իսկ աշակերտին մնում է եզրակացնելու,որևէ մտքի հանգելը,որի միջոցով նաև զարգացվում է նրա տրամաբանական մտածողությունը:

Բառերի քանակից ոչ պակաս կարևոր է նաև աշակերտների քանակը,քանի որ լեզուն սովորելը նշանակում է այդ լեզվով խոսել կարողանալու, բառերը ճիշտ արտասանել, իսկ դա նշանակում է,որ բոլոր աշակերտները պետք է կրկնեն, ճիշտ արտասանեն յուրաքանչյուր բառը,իսկ մեծաթիվ աշակերտների դեպքում ավելի է դժվարանում յուրացման պրոցեսը:

Նախկինում բառապաշարը սովորում էին հանպատրաստից,առանց ճիշտ արտասանության ուսուցման,սովորում էին ամենօրյա կենցաղային,ծառայողական-աշխատանքային բառեր, որպեսզի հարմարվում շրջապատին, կյանքին:Ներկայումս ճիշտ բառապաշարի ճիշտ յուրացումը կարևորվում է լեզվի ուսուցման բոլոր փուլերում: Հայտնի են 4 հիմնական քայլեր բառապաշարի ավելի լավ յուրացման համար.

1. ծանոթ լինել բառերին,
2. կարողանալ կարդալ դրանք,
3. բառարան օգտագործել,
4. կանոնավոր կերպով կրկնել դրանք:

Ընդ որում,որքան ավելի է մեծանում յուրացված բառերի քանակը,այնքան ավելի է հեշտանում դրանք արդեն իմացած բառերի հետ կապեր ստեղծելը, բնականաբար հեշտանում է դրանք հիշելը և կիրառելը: Ուսուցանվող բառերի թիվը պետք է սահմանափակ լինի, հիմնված լինի ծրագրային պահանջների վրա: Օտար լեզուների ուսուցման ցանկացած դասընթաց հիմնված է աշակերտների 4 հմտությունների վրա. լսել,խոսել, ընթերցել,գրել,իսկ վերոհիշյալ 4 հմտություններից յուրաքանչյուրը հիմնվում է լեզվի ուսուցման 3 բաղադրիչ մասերի վրա. արտասանություն, բառապաշար, քերականություն:Ուրեմն, բառապաշարը պետք է ընտրվի լեզվական նյութին համապատասխան:Ընտրված բառերը պետք է լինեն ամենահաճախակի օգտագործվող, հեշտությամբ համադրվող (nice,book,room,film),ոճական առումով անսահմանափակ,արժեքավոր լինեն բառակազմության տեսանկյունից( use , used, useful, useless): Մարդիկ կարող են ունենալ շատ տարբեր մոտեցումներ զանազան հարցերի վերաբերյալ,բայց առանց լայն ու ճիշտ բառապաշարի չեն կարող ճիշտ արտահայտել իրենց մտքերը,չեն կարող բացահայտել իրենց ընդունակությունները:

1. [4, էջ 41]
2. [1, էջ 201]
3. [2, էջ 121]
4. [3, էջ 178]

Եզրակացություններ, առաջարկություններ

| | |
|---|---|
| Վերհանված արդյունfներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին | Ըստ կատարված հետազոտության ևս մեկ անգամ պարզ դարձավ, որ մեծ բառապաշարով հարուստ օտար լեզուն,լինելով իր լեզվակիր ժողովրդի մշակույթի էական տարրը և այլ ժողովուրդներին այդ մշակույթը փոխանցելու միջով, նպաստում է աշխարհի ամբողջական պատկերի ձևավորմանը, ժողովուրդների փոխըմբռնմանը, միջմշակութային դրական հարաբերությունների ամրապնդմանը:<br><br>Օտար լեզուներին մեծ բառապաշարով տիրապետելը բարձրացնում է դպրոցականների հումանիտար կրթության մակարդակը,նպաստում է անհատականության ձևավորմանն ուսցիալացմանը այս բազմալեզու , բազմամշակույթ աշխարհի հարափոփոխ պայմաններում:<br><br>Օտար լեզուներն ընդլայնում են սովորողի աշխարհայացfը, նպաստում են հաղորդակցական կարողությունների ձևավորմանը,սեփական լեզվի նորմերի ընկալմամբ ու գիտակցմանը, ընդհանուր խոսfային կարողությունների զարգացմանը:Հենց այսպես է դրսևորված լեզվական ուսումնական առարկաների փոխազդեցությունը,ինչը նպաստում է նրանց մոտ լեզվական կոմպետենցիայի ձևավորմանը: |

Օգտագործված գրականության ցանկ


1. Ա. Բալայան, Մանկավարժական հոգեբանության հարցեր, Լույս, Երևան, 1983, 456 էջ

2. Ա. Նալչաջյան, Հոգեբանական բառարան, 239էջ

3, Ա Նալչաջյան, Հոգեբանության հիմունքներ, Հոգեբան հրատ., Ե., 1997, 648էջ

4. Клычникова 3. И. Психологические особенности обучения чтению на иностранном языке. –М. Просвещение, 1973.

Հավելվածներ

| Հաշվետվության կցված նյութեր<br><br>● Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ)<br>● Նկարներ<br>● Արդյունքներ |  |
|---|---|


S. Bagdassarian, S. Gurdjayants
English
Հումանիտար հոսք
10


ՀԱՅԵՐԵՆ-
ԱՆԳԼԵՐԵՆ
ԶՐՈՒՑԱՐԱՆ
No
Բարև


Հ.Ա. ԹՈՔՄԱՃՅԱՆ
Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Ց
ԱՆԳԼԵՐԵՆԻ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
H.A. TOKMAJIAN • A MODERN ENGLISH GRAMMAR


ENGLISH - ARMENIAN
PRACTICAL
DICTIONARY
ԳՈՐԾՆԱԿԱՆ
ԲԱՌԱՐԱՆ
ԱՆԳԼԵՐԵՆ - ՀԱՅԵՐԵՆ


Նոր անգլերեն-հայերեն
Բառարան
New
English-Armenian
Dictionary